

**Հայերի ցեղասպանության 91-րդ տարեդարձին նվիրված հուշ-երեկո
Եբրայական համալսարանում**

-----Երուսաղեմ----- 2006 թվականի ապրիլի 26-ին Երուսաղեմի Եբրայական համալսարանում տեղի ունեցավ հուշ երեկո՝ նվիրված 1915-17 թվականներին Օսմանյան թուրքերի ձեռքով 1,5 միլիոն հայերի բռնազաղթման ու կոտորածի 91-րդ տարեդարձին: Եբրայական համալսարանի Գլխավոր Ռամ Բաժանմունքի «Բեյթ Բեյզիա» մասնաշենքի գրադարանում միջոցառմանը ներկա էին մոտ 200 հոգի՝ հայեր ու հրեաներ:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետից պաշտոնապես ներկա էր դեկան, պրոֆ. Սթիվեն Կապլանը: Երեկոն, ինչպես որ նախորդ տարիներին, կազմակերպել էր Եբրայական համալսարանի՝ տասնամյակներ առաջ հիմնադրված հայագիտական ամբիոնը՝ պրոֆ. Մայրի Սթոունի գլխավորությամբ:

Ելույթ ունեցան պրոֆեսորներ Կապլանը և Սթոունը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության Պատվո հյուպատոս Յուլիա Մոմջյանը, Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Մանուկյանը, եպիսկոպոս Արիս Շիրվանյանը և Սրբոց Հակոբյանց վանքի այլ հոգևորականներ:

Նախորդ տարիների նման, հայերի ցեղասպանության հիշատակի երեկոն համընկավ Իսրայել պետության՝ Հոլոքոսթի հիշատակի օրվա հետ, որ ոգեկոչում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Նացիստների ձեռքով նահատակված 6 միլիոն հրեաներին: Ներկաների թվում էին Հոլոքոսթի վերապրողներ ու նրանց զավակներ՝ հայ վերապրողների ու նրանց զավակների հետ հարգանքի տուրք մատուցելու 1,5 միլիոն զոհերի հիշատակին:

Գլխավոր ելույթով հանդես եկավ Իսրայելի Քենեսեթի անդամ Յոսսի Սարիդը, որն ակտիվորեն պայքարում է Իսրայել պետության կողմից հայերի ցեղասպանության ճանաչման համար: Դժբախտաբար Իսրայելը, Թուրքիայի հետ իր հարաբերությունների պատճառով, պաշտոնապես չի ճանաչում հայոց ցեղասպանությունը: Քանի որ հրեաները լավ գիտեն, թե ինչ է նշանակում ցեղասպանություն, ասաց Սարիդը, անբարոյականությունն ու մեծագույն սխալ է ուրիշների նույնախի ողբերգությունը չճանաչելը՝ նրանց պատճառելով ժխտման ցավն ու վիրավորանքը, ինչպիսի շահերով էլ դա թելադրված լինի:

Սարիդի միտքը շարունակեց «Ֆոլբերայթ» դրամաշնորհին արժանացած հայտնի հայագետ, պրոֆ. Աբրահամ Տերյանը՝ նշելով, որ ժխտման հոգեբանությունը երբեմն կարող վիրավորել նույնքան, որքան բուն ցեղասպանությունը: Հայերն ու հրեաները սա լավ են հասկանում, ասաց Տերյանը, քանի որ նրանց պատմությունները նման են: Հետևաբար՝ նրանք պետք է համատեղ ուժերով պայքարեն նման ոճիրների դատապարտման համար:

Երեկոյի ավարտին նկատելի էին որոշ լավատեսական նոտաներ՝ ապագայի նկատմամբ հավատով, թե ի վերջո հայերի ցեղասպանությունը ճանաչելու են բոլոր երկրները: Այս առումով որոշ դրական տեղաշարժ է նկատվում նույնիսկ Թուրքիայի մոտեցման մեջ, եզրափակեցին Սարիդն ու Տերյանը:



Մանրամասների համար կարող եք դիմել՝
Hebrew University of Jerusalem
The Armenian Studies Program
Հեռ. +972-2-588-3651
Ֆաքս. +972-2-588-3658
Էլ. փոստ. armenian@msec.huji.ac.il
Ինտ. կայք <http://micro5.msec.huji.ac.il/~armenia>